

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԼՖՈՐՎԻԼՈՒՄ

Հունիսի 2-ին, շաբաթ:

Ժամը 15.30-ին Հայոց Հայրապետը ժամանեց Ալֆորվիլ և պաշտոնական այցելություն տվեց քաղաքապետարան, որի մուտքի առաջ քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը: Այնուհետև քաղաքապետարանի դահլիճում, ի ներկայության ֆրանսիացի և հայ պաշտոնական անձնավորությունների, ճառեր և հուշանվերներ փոխանակվեցին մեծարգո պրն. քաղաքագլխի և Հայոց Հայրապետի միջև: Այս առթիվ տեղի ունեցավ նաև հյուրասիրություն:

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅՈՑ «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկիի, առաջնորդվեց Ալֆորվիլի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցի՝ նախագահելու կիրակամտի ժամերգությանը:

Այնուհետև Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց եկեղեցուն առընթեր ս. Մեսրոպի անվան նորակառույց հայ դպրոցի հանդիսավոր բացումը: Հանդիսության բացումը կատարեց տ. Ներսեհ ծ. վրդ. Փապուճյանը:

Սպա ելույթ ունեցավ կրթական հանձնախմբի կողմից տիկ. Զարուհի Քեշիշյանը, որն ասաց.

«Վեհափառ Տեր,

Այս պահուն մեր սրտերը հուզումի և ուրախության ալիքներով լեցված են: Ալֆորվիլի գաղութը կարոտն ուներ Ձեր օրհնաբեր այցելության:

Ձերդ Սրբության օրհնությամբ կատարվեցավ այսօր հանդիսավոր բացումը սուրբ Մեսրոպ կրթարանի, որ կոչված է դառնալու լուսատու նոր ջահ մը մեր գաղութին համար: Վերջապես Ալֆորվիլի հայությունը տարիներու իր երազին իրականացումը կտեսնե:

Այսօր բոլորիս սրտերը կլեցվին ուրախության և հպարտության զգա-

ցումներով, որ ի վերջո ս. Պողոս-Պետրոս եկեղեցվո կից բարձրացավ կրթական նոր հարկ մը:

1925-ական թվականներուն, երբ հետզհետե այս գաղութը սկսավ կազմակերպվիլ, գլխավոր և հիմնական մտահոգություններեն մին եղավ զարկ տալ նախ հայկական լեզվի ուսուցման և ապա մշակութային կազմակերպությանց և ձեռնարկներու: Ալֆորվիլը սկիզբեն ի վեր և շարունակաբար ունեցած է իր հայկական դասընթացքները զանազան շենքերու մեջ:

Հիները կհիշեն անշուշտ, թե ինչ զոհաբերության ոգիով և դժվար պայմաններու մեջ տրված են թատերական ներկայացումներ, երգահանդեսներ և դասախոսություններ:

Այնուամենայնիվ միշտ կենսական պահանջը զգացված էր ունենալու հատուկ վարժարան մը:

Ինչպես գիտեք, ս. Մեսրոպ կրթարանը իր դուռները բացած է 1978 հոկտեմբերեն ի վեր:

Գաղութին գլխավոր իղձն էր ունենալ ամենօրյա մանկապարտեզ մը հայ մանուկներու մատաղ ուղեղին մեջ դրոշմելու համար ամենեն առաջ մեր «Մեծասքանչ հայ լեզու»-ն:

Այդ փափաքը արդեն այսօր իրագործված է:

Ս. Մեսրոպ կրթարանը շատ հեռանկարներ ունի հառաջիկայինն, քանի որ ծրագրված է հետզհետե կազմակերպել կրոնքի, մեր հայ եկեղեցիի պատմության և մշակույթի վերաբերյալ դասախոսություններ, ֆիլմերու ցուցադրություն, դպրոցական երեխաներու երգչախումբ և ընտելացնել նաև մանուկները տոհմիկ մեր հայկական պարերուն:

Այս մեր նպատակներու հաջողության համար պիտի խնդրենք Ալֆորվիլի մեր բոլոր հայրենակիցներեն անխտիր՝ թիկունք կենալ մեզի նյութապես թե բարոյապես:

Այս առիթով, Վեհափառ Տեր, կխնդրենք Ձերդ Սրբութենեն, որ օրհնեք մեր վարժարանը»:

Հանուն դպրոցի վարչության, ֆրանսերեն լեզվով հետևյալ ուղերձն ընթերցեց դոկտ. Սերժ Սիմոնյանը.

«Ձերդ Սրբություն,

Այսօր հավաքված ենք Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի օրհնությամբ կատարելու բացումը ս. Մեսրոպի անունը կրող այս աքանչելի դպրոցի, որը կառուցված է Ալֆորվիլի հայ առաքելական եկեղեցու հովանու տակ:

Ֆրանսիայի հայկական համայնքը, որը հանդիսանում է ժառանգությունը օսմանյան պետության կողմից կազմակերպված 1915-ի ցեղասպանությունից փրկված մեր մայրերի և հայրերի, շատ լավ կարողացավ ընտելանալ այս հյուրընկալ հիասքանչ երկրին, որ Ֆրանսիան է: Այս համայնքն իր ամենախորունկ արմատներով կարողացավ շաղախվել Ֆրանսիայի կյանքին առանց երբեք մոռանալու իր ծագումը, իր մշակութային և կրոնական ժառանգությունը: Ալֆորվիլը մի քաղաք է, որի բոլոր բնակիչները, ինչպիսին էլ լինի նրանց ծագումը, ներդաշնակորեն մասնակցում են նրա բարգավաճմանը:

Այնուամենայնիվ, ծագումով հայ ալֆորվիլցիները միշտ ցանկացել են պահել իրենց առանձնահատկությունը: Հայ առաքելական եկեղեցին միշտ էլ եղել է և մնում է նրա առաջին ամրոցը:

Հայ մշակույթի մեր տունը հանդիսացել է հասարակական միավորված մի կառույցի ծոցում նրա կապի և հանդիպման անհրաժեշտ տարրը:

«Ս. Մեսրոպ» դպրոցը կոչված է ապահովելու հայ մշակույթի պահպանումը մեր երեխաների մեջ՝ երաշխավորելով այսպիսով մեր հայկական ծագման տևականությունը:

Մի բուռ մարդիկ էին՝ Ալֆորվիլի եկեղեցու հոգաբարձության ծոցում, որ ձեռնամուխ եղան այս դպրոցի կառուցմանը: Սակայն Փարիզի հայ համայնքի, Կյուլպենկյան հիմնարկության, Հ.Բ.Ը. Միության և մանավանդ Ալֆորվիլի քաղաքապետարանի— որի ներկայացուցիչն է այստեղ մեր քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկին— բերած մասնակցությունը թույլ տվեց հաջողությամբ առաջ տանել շինարարական աշխատանքները և իր ավարտին հասցնել այս շենքը:

Այժմ մնում է, որ Ալֆորվիլի հայկական համայնքը աշխատի կենդանի պահել և զարգացնել այս դպրոցը, որի առաջ դրված են երեք այժմեական խնդիրներ.

ա) Հիմնումը երկլեզվյան մի մանկապարտեզի, որի վրա ներկայումս կենտրոնացած են մեր բոլոր ջանքերը: Սկիզբը շատ դժվար եղավ: Անհրաժեշտ էր հարթել որոշ դժվարություններ և չափավորել մի շարք ծրագրեր: Մեր առաջին ուսուցչուհու անակնկալ մահը հապաղեցրեց դասերն սկսելը: Այնուամենայնիվ 1979 թվականի ապրիլից սկսած Ալֆորվիլի հայկական համայնքը կարծես զգաց մեր նախաձեռնած սույն գործի անհրաժեշտությունը. և մենք վստահ ենք, որ նա կբերի իր բարոյական և նյութական օժանդակությունը ի խնդիր երկլեզվյան այս մանկապարտեզի հաջողության, առավել ևս նրա համար, որ մենք համաձայն գտնվեցինք, որպեսզի այս մասնավոր դպրոցում ուսանելը լինի անվճար, ինչպես պետական դպրոցներում է: Այս ձեռնարկի հաջողությամբ է պայմանավորված նույնանման հայկական ուսումնական այլ հաստատությունների հիմնումը Ֆրանսիայի մյուս քաղաքներում, որտեղ գոյություն ունեն հայկական աշխույժ համայնքներ:

բ) Հաստատումը հայերեն լեզվով միօրյա դասընթացների դպրոցահասակ երեխաների համար՝ շարունակելու մանկապարտեզում սկսված գործը:

գ) Հաստատումը հայոց լեզվի կատարելագործման երեկոյան դասընթացների հայ պատանիների և չափահասների համար, ինչպես նաև ֆրանսերեն լեզվի ուսուցման հատուկ դասընթացների՝ վերջերս ներգաղթած այլ հայերի համար, որոնք չգիտեն ֆրանսերեն լեզուն:

Ներկայումս շուրջ 160 աշակերտներ հաճախում են վերոհիշյալ դասընթացներին:

Վերջացնելով մեր համառոտ զեկուցումը, հանուն մեր նորաբաց դպրոցի ղեկավար հանձնախմբի, ամենաջերմ շնորհակալություններ ենք հայտնում Ալֆորվիլի քաղաքապետությանը: Թող Նորին Սրբության օրհնությունը պարգևի այս դպրոցին անդորրություն, որն անհրաժեշտ է նրա բեղմնավոր գործունեության և հարատևության համար»:

Ալֆորվիլի ս. Մեսրոպ հայկական դպրոցի բացման արարողությանը գեղեցիկ և հուզիչ հետևյալ ճառով հանդես եկավ նաև քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկին.

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺՈԶԵՖ ՖՐԱՆՉԵՍԿԻԻ ՃԱՌԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մեզ համար մեծ ուրախություն և միաժամանակ մեծ պատիվ է նորից ընդունել Ձերդ Սրբությանը Ալֆորվիլում: 1970 թվականի Ձեր վերջին այցելությունից մենք բոլորս պահել ենք լավագույն հիշատակներ: Հենց որ մենք իմացանք Ֆրանսիա Ձեր ժամանման մասին, համակվեցինք այն հույսով, որ դրանք կվերանորոգվեն:

Եվ իրոք, այդ առիթը տրվեց մեզ շնորհիվ այս հայկական դպրոցի, որի կառուցման ավարտը, երջանիկ զուգադիպությամբ, համընկնում էր Ֆրանսիա Ձեր ճանապարհորդության շրջանին: Խնդրել Ձեզ, որ պատիվն անեք գալու այստեղ՝ բացումը կատարելու համար այս հաստատության, համարձակ մի մտածում չթվաց մեզ: Այդ պատճառով էլ ձեռնարկեցինք անհրաժեշտ միջոցները պատշաճ հանդիսավորությամբ ընդունելու համար Ձերդ Սրբությանը:

Եվ ահա Դուք մեր մեջ եք, մեր կողքին՝ մասնակցելու համար Ալֆորվիլ քաղաքի հայկական համայնքի կյանքում տեղի ունեցող այս մեծ իրադարձությանը, ինչպես արել էիք տարիներ առաջ մի ուրիշ մեծ իրադարձության առիթով, երբ այս նույն քաղաքում բացումն էր կատարվում Կոմիտասի անվան փողոցի:

Այսպես, Ձեր ներկայությունն այստեղ մեր կյանքի այս եռուն ժամանակաշրջանում, ցույց է տալիս Ալֆորվիլի հայկական համայնքի կապերի ամրությունն ու հարատևությունը Մայր Հայրենիքի և ամբողջ սփյուռքի հետ: Ամեն անգամ Դուք Ձեզ հետ բերում եք վերանորոգող հզոր մի շունչ, որը ջնջում է բոլոր դժվարություններն ու տարակուսները և վերակենդանացնում հույսերը: Դրա ապացույցն այն է, որ Ձեր վերջին այցելությունից ի վեր մենք կառուցեցինք «Հայ Մշակույթի տունը» Մադրիդ փողոցի վրա, ինչպես նաև սուրբ Մեսրոպի անվան այս դպրոցը, որի հանդիսավոր բացումը կատարելու պատիվն եք անում մեզ այսօր:

Ինչպես կարող եք նկատել, հայ եկեղեցու կողքին հստակ գծերով բարձրացող այս ուսումնական հաստատության շենքի կառուցումը ծրագրվեց և իրականացվեց «Հայ Մշակույթի տան» շրջակայքը պահպանելու և հարստացնելու նպատակով: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցումից ի վեր Ալֆորվիլի հայերը երազում էին նույն հողամասի վրա կառուցել նաև մի դպրոց՝ համատեղելու համար իրենց մշակույթի և պաշտամունքի վայրը: Այժմ դա արդեն կատարված իրողություն է:

Սույն ձեռնարկի հաջողությունն անմիջական եղավ, քանի որ շուտով մանկապարտեզում սովորելու համար մեծ թվով արձանագրություններ տեղի ունեցան, և ներկայումս 80 հայ պատանի տղաներ և աղջիկներ կանոնավոր կերպով հաճախում են չորեքշաբթի օրվա դասընթացներին:

Մեր քաղաքապետությունը նույնպես, որ հենց սկզբից զորավիգ կանգնեց այս նախաձեռնությանը, ուրախ է ձեռք բերված առաջին խրախուսիչ արդյունքների համար:

Ես քաջ գիտակցում եմ, թե ինչպիսի մեծ ջանքեր պահանջեց այս ձեռնարկը և թե գովասանքի արժանի ինչքան օգտակար աշխատանք կատարեցին նրա նախաձեռնողները: Հատուկ գնահատանքի արժանի են մանավանդ պրն. Ջրբաշյանի և պրն. Պետիկյանի ցուցաբերած հավատքը, նրանց

քաջությունը, համարձակությունն ու անձնվիրությունը սույն աշխատանքում:

Ես գիտակցում եմ նաև կարևորությունն այն արդյունքների, որը ձեռք բերվեց այս դպրոցի շինության գործին լծված խմբի կողմից՝ գլխավորությամբ մեր շատ սիրելի և հարգելի տ. Ներսեհ ծայրագույն վարդապետ Փալուզյանի, ինչպես նաև մեծահարգ դոկտ. Մոմճյանի, որը, այսօր իսկ Պրագա մեկնող հայ մշակութային մի պատվիրակության մաս կազմելու պատճառով, ցավ հայտնեց, որ պիտի չկարողանա բաժանել այս պահի մեր ուրախությունը:

Ես չեմ կարող այստեղ չհիշատակել նմանապես այն կարևոր դերը, որ կատարեց ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հոգաբարձությունը այս դպրոցի շինության հաջողության համար: Թող բոլորը, այդ թվում և Տիկնանց Հանձնախմբի ժրաջան անդամները, բարի լինեն ընդունելու մեր ամենաջերմ շնորհակալությունը այն բեղմնավոր աշխատանքի համար, որն ի գործ դրվեց այս ուսումնական հաստատության ստեղծման բոլոր հանգրվաններում՝ սկսած նրա նախաձեռնումից մինչև նրա կառուցումն ու ղեկավարումը:

Այժմ սուրբ Մեսրոպի անվան այս դպրոցը բոլորի դպրոցն է: Ինչպես ասված է նրա ղեկավար հանձնախմբի հայտարարության մեջ՝ «Պետք է հայերն օգտվեն այն բացառիկ բախտավորությունից, որ ներկայացնում է երկլեզվյան այս մայրենի դպրոցը հայ սփյուռքի տևականացման համար: Ալֆորվիլի այս ձեռնարկման հաջողությունից է կախված համանման այլ ուսումնական հաստատությունների ստեղծումը»:

Ինչ վերաբերում է ինձ, ես համոզված եմ, որ այս կոչը լսելի կդառնա, որովհետև ուժեղ է ձեր կամքը, ձեր կապվածությունը կրթական գործին: Ալֆորվիլում երկար ժամանակ է, ինչ ստեղծվել են և գործում են ձեր հասարակական, մշակութային, կրոնական, մարզական ընկերակցությունները: Ես հպարտ եմ, որ կարողացել եմ նրանց բերել մեր քաղաքապետության օժանդակությունը, որը մեծապես նպաստել է նրանց ծաղկումին և թույլ է տվել նրանց հաստատուն ու բարձր պահել երեքհազարամյա մշակութային մի ժառանգություն:

Մեր քաղաքի կյանքը հարուստ է բազմապիսի բաղկացուցիչներով, որոնք նրա ինքնուրույնությունն են կազմում: Հայկական համայնքը ներդաշնակորեն շաղախված է այդ կյանքի հետ և փոխանցում է նրան համերաշխության և հյուրասիրության իր թանկագին հատկությունները: Մասնավորապես գնահատանքի արժանի են նրա ջերմությունը և նրա սովորույթների խորունկ մարդկայնությունը: Այս ինքնատիպ և կարևոր նպաստը անփոխարինելի մի հարստություն է կազմում բոլորի համար, և մենք քաջ գիտակցում ենք, որ փոխանցումի այս առաքելության մեջ մենք ևս պետք է ստանձնենք մեր բաժինը:

Այս փոխանակումներն ու փոխներգործությունները ավելի ու ավելի են ամրացնում բարեկամական կապերը մեր համաքաղաքացիների միջև, որոնք շատ բնական կերպով ընդունեցին իմ այն նախաձեռնությունը, որ մեր քաղաքի գործերի ղեկավարման մեջ հայերը ևս ունենան իրենց մասնակցությունը: Երկու հարգարժան հայ անձնավորություններ արդեն իրենց կարևոր և գնահատելի նպաստն են բերում մեր քաղաքապետարանի աշխատանքներին:

Ահա այժմ մի նոր զարդ ևս ավելացավ Ալֆորվիլի հայկական հաստատությունների մանյակի վրա: Մենք կարծում ենք, որ նա լավագույնս

կկատարի իր դերը այս ազնիվ գործին կապված բոլոր հաստատությունների և բոլոր մարդկանց հետ գործակցաբար:

Փոխանցում հարուստ մի ժառանգության և ավանդույթների, պայքար տարբերվելու իրավունքի համար և հարգանք ազգային ինքնության նկատմամբ: Ահա պայքարի լավագույն մի ասպարեզ ձեզ համար, բայց նաև բոլորի համար:

Եվ մեր հայ բարեկամները թող լավ իմանան, որ պայքարելով այստեղ հայկականության համար՝ պայքարած կլինեն նաև ազատության համար:

Հանդիսության ընթացքում խոսք առավ նաև տ. Սերովբե արքեպիսկոպոսը, որն իր ճառի ավարտին հրավիրեց Հայոց Հայրապետին այս ուրախ առիթով Իր պատգամն ու օրհնությունը տալու բոլոր ներկաներին:

Հայոց Հայրապետը նախ շնորհավորեց Ալֆորվիլի հայությանը հոյակապ մի նոր կրթական օջախի բացման առիթով ու շեշտեց, որ սփյուռքի մեր պայմաններում հայ նոր սերնդի քրիստոնեական դաստիարակության և ազգային ոգու անաղարտ պահպանման համար երկու հիմնական սրբություններ են՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին և նրա հովանու տակ բացված հայկական վարժարանները, որոնք հանդիսանում են երկու հրեղեն սյուները մեր ժողովրդի հավատքի, բարեպաշտության, ազգային ավանդությունների պահպանման և հայրենասիրության:

Հայոց Հայրապետը ջերմ շնորհակալություն հայտնեց քաղաքագլուխ պրն. Ժոզեֆ Ֆրանչեսկիի ներկայության և սրտառուչ խոսքերի համար, որն անձամբ եկել էր բաժանելու հայ ժողովրդի ուրախությունը որպես մեր ժողովրդի մեծ բարեկամը և հայասեր պետական գործիչը:

Դպրոցի հանդիսավոր բացումից հետո տեղի ունեցավ ճոխ հյուրասիրություն՝ մասնակցությամբ շուրջ հազար հավատացյալների: